Լոռու մարզպետի շնորհավորանքի խոսքը Մայիսի 9-ին նվիրված միջոցառմանը

09.05.2014թ.

Սիրելի հայրենակիցներ:

Այսօր մեծ հաղթանակների տոն է, ազատության, անկախության, հանուն հայրենիքի մղված զոյամարտերի հաղթանակների օր:

Մենք տոնում ենք ֆաշիզմի դեմ տարած մեր պապերի փառապանծ հաղթանակի 69-րդ և նրանց որդիների ու թոռների պանծալի հաղթանակի տոնը, որ նշանավորվեց 22 տարի առաջ՝ Շուշիի ազատագրման հաղթական համազարկերով:

Մեզ համար թանկ ու նվիրական են բոլոր այն ռազմիկները, ովքեր վտանգի պահին անվարան դիմագրավել են թշնամուն:

Երկրորդ աշխարհամարտում բազմաթիվ ժողովուրդների հետ միասին նաև հայորդիների սխրանքով նվաճված հաղթանակը ոչ միայն մեր երկիրը փրկեց վերահաս աղետներից, այլև հնարավորություն տվեց կառուցելու խաղաղ ու ստեղծագործ ապագա:

Մենք խոնարհվում ենք երկրորդ աշխարհամարտի մասնակից հերոսական սերնդի առջև, մենք հպարտանում ենք այն իրողությամբ, որ երբ վտանգված էր պապենական երկիրը, արյան կանչով Արցախի ազատագրման, հայրենիքի պաշտպանության դիրքերում էին այդ սերնդի որդիներն ու թոռները՝ երկրապահ կամավորականներն ու ազատագրական մարտերում ծնված Հայոց բանակի ռազմիկները:

Հայ ժողովրդի պատմությունը հանուն ազատության և անկախության մղվող պայքարի պատմություն է: Մեր նախնիների բոլոր սերունդներն իրենց զավակներին են փոխանցել հայ ինքնության, ազատատենչ ոգու և անկախ պետականության տեսլականը , չդադարելով հավատալ, որ դա իրողություն կդառնա:

Գոյապայքարում նվաճված հաղթանակը Արցախաբնակ մեր հայորդիների համար դարձավ ազատության և ինքնորոշման աստվածադիր իրավունքի պաշտպանության հաղթական պայքարի առանցքային հանգրվաններից մեկը՝ ոսկե տառերով գրվելով ազգային մեր արդի պատմության տարեգրության մեջ:

Մեր սերնդին բախտ վիճակվեց կրելու նախնիների երազանքի, պայքարի ու հաղթանակի դրոշը հայոց անկախության անխորտակ միջնաբերդի վրա ծածանելու պատիվը:

Շուշիի ազատագրումից հետո մայիսի 9-ը մեզ համար ստացավ ևս մեկ նշանակություն, դարձավ հաղթանակի և խաղաղության նոր խորհրդանիշ: Այն մեզ համար հաղթական գոյապայքարի և ազատության օր է, նոր կյանքի սկիզբ, հայոց նորագույն պատմության նշանակալի ու նվիրական հանգրվան:

Պատմական այդ հերոսամարտերում իրենց ակտիվ մասնակցությունն ու մեծ ավանդն ունեցան նաև լոռեցիները՝ երկրագործն ու մետալուրգը, քիմիագործն ու շինարարը, ուսուցիչն ու բժիշկը, գիտնականն ու միջնակարգ դպրոցի նորավարտը:

Պայքարի առաջին գծում անձնվիրաբար մարտնչեցին մեր ժողովրդի լավագույն, պանծալի զավակները, մարտնչեցին հերոսաբար, անձնվիրաբար:

Շատերն ընկան մարտում, իրենց ոգու կորովը թողնելով սերունդներին:

Փա՛ռք, հայրենիքի պաշտպանության և ազատության համար նահատակված մեր հերոսներին:

Փա՛ռք հայոց հաղթական բանակին:

Շնորհավոր հաղթանակների տոնը: